**Հավելված՝**
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2015 թվականի հունիսի 15 -ի N 93-Ա որոշման

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՆՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՍԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Չինաստանի ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի Սիան և Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքները, գործելով Հայաստանի Հանրապետության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին համատեղ կոմյունիկեի սկզբունքներին համաձայն, ցանկանալով խթանել երկկողմ բարեկամական հարաբերությունները հայ և չին ժողովուրդների միջև, ամրապնդելով և զարգացնելով երկու քաղաքների միջև բարեկամական համագործակցությունը, համաձայնեցին բարեկամական խորհրդակցությունների միջոցով հաստատել բարեկամ քաղաքների հարաբերություններ:

I. Երկու կողմերը, համաձայն հավասարության և փոխշահավետության սկզբունքներին, կիրականացնեն փոխանակում և համագործակցություն երկու քաղաքների միջև տնտեսական, առևտրային, գիտական ու տեխնոլոգիական, մշակութային, կրթական, սպորտային, առողջապահական, կադրային և այլ ոլորտներում՝ խթանելով միասնական բարգավաճումն ու զարգացումը:

II. Մշտական կապ պահպանել երկու կողմերի ղեկավարների և համապատասխան կառուցվածքների միջև՝ փոխանակման ու համագործակցության, ինչպես նաև ընդհանուր հարցերի շուրջ խորհրդակցությունների իրականացման համար:

III. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Այն վավեր է հինգ տարի: Ժամկետը լրանալուց հետո այն կարող է ուժի մեջ մնալ, եթե կողմերը այն չդադարեցնեն:

IV. Սույն համաձայնագիրը՝ ստորագրված 8 հունիսի 2015 թվականին Գյումրիում, կազմված է չինարեն, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, երկուական օրինակներից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասարազոր ուժ:

ՉԺՀ ՇԱՆՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ